

լատման գծին շարժման, որոնք պատճառ կ'ըլլան եղանակաց տեղափոխանց մէջ եղած տարրերութեանց կիսագնտի մի և նոյն կողման համար:

Ներկայ ժամանակի եղանակաց տեղափոխանքն, և աստեղարաշխական հաշիւներով, կրնանք հետեցնել թէ մի և նոյն կիսագնտի վրայ գտնուող վայրի մը՝ հին ժամանակի եղանակաց տեղափոխանքը որչափ էր. վասն զի ներկայիս ամառուան և զարնան եղանակաց օրերու թիւը կը հասնի 185 $\frac{1}{3}$, և որովհետեւ հիմա երթալով կը նուազի գրէթէ 50՝, 1 շափով, ըսել է թէ 70 դար առաջ 189 $\frac{1}{3}$, էր սոյն եղանակաց օրերուն թիւը:

Արդ իբր շրջան մ'աննելով ֆաղդէացւոց ժամանակի գարնան գիշերահաւասարէն մինչև աշնան գիշերահաւասար եղած օրերուն թիւը, այսինքն, 189 $\frac{1}{3}$, ու կրկնելով զայն տասն և ինն անգամ պիտի տեսնենք թէ 3600 թիւն պիտի լրացնէ (189 $\frac{1}{3}$ \times 19 = 3600), որուն շար անունը տուած են Բարեկացիները, ինչպէս վերագոյն տեսանք որ այս մէկ շարը կը նոյնանար խաւարմանց շրջանին հետ, որ է 18 $\frac{1}{3}$, տարի: Արդ յետ գտնելու թէ մէկ շարը կը համապատասխանէ 3600 օրերու՝ բազմապատկելով 120 շարերով պիտի ունենանք խնդրեալ Սիֆրիւր ամս, որ է 432000 օր. (189 $\frac{1}{3}$ \times 19) \times 120 = 432000:

Ասով ասուգեցինք թէ ֆաղդէացւոց թագաւորաց ժամանակը ոչ էթէ ըստ ումանց կարծեաց բիրւարտը տարիներ առաջ ծագումն առած է, այլ մեր ժամանակագրութեան շարքին մէջ խոնարհարար կը մտնէ: Մէկ խօսքով կրնանք ըսել թէ մեր Ս. Գրոց նախամարդէն՝ Աղամէն առաջ, ոչ մէկ այլ մարդու գոյութիւն եղած է:

Հ. ԽՈՐԷՆ Ս.

Յ Ա Տ Ո Ւ Կ Ո Ճ

ՈՒՂՂԱՓԱՌ ԿՐՕՆՔԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ

Գործնական քննադատութիւններ կրօնաւոյցներուն, Փր. Սիիրակոյի՝ Բրակայի հանրային կիսմագիտիկ կրօնագիտութեան ուսուցչակետի

Ձեի գուշակեր որ արձակուրդի ազատ ժամերը օգտակար անցընելու նպատակով ընծերցման համար հարազատի մը փոխ տրուած հատորիկը ինծի պիտի վերադառնար, յիշատակի օր մը, ամբողջապէս հայացած, ի նշան գնահատման. եւ հիմակ անկից դիպուածով ընտրուած յօդուած մը (Գլ. Գ. § 32) ընծերցողներուս ներկայացնելու մէջ միակ դիտումն ունիմ յայտնել շնորհակալութիւնս անոր թարգմանչին: Աւելորդ պիտի չըլլայ համառօտ մը ծանօթացնել գիրքը իր Յառաջաբանէն:

*
* *

Ներկայ գրքիս մէջ կրօնական ուսուցման համար ալ օգտակար կ'ըլլուին նոր մանկավարժութեան առողջ սկզբունքները, որոնց միջոցաւ դաստիարակութեան աւարելոյն մէջ վերջին ատեններս մեծ արդիւնքներ եւ յառաջադիմութիւններ ձեռք բերուցան:

Գլխաւորապէս նպատակս եղաւ գործնական թեաղորութիւններ ընծելու: Զգուշացայ պարզ նրբամտութիւններէ որոնցմով ոչ ոք կ'իմաստանայ: Ով որ գրքէս գրուի մը կարդայ, ըսածս շուտով պիտի հասկնայ:

Այսօր արդէն Յատուկ ոճս շատ մը աստուծաբանական ու նաեւ ուսուցչական (magistrali) հաստատութիւններու մէջ մուտք գտած է: Բնականապէս ուսուցչութեան թեկնածուներու հրահանգման համար, կը թողուին այն մասերը որ արդէն ծանօթ են իրենց՝ վարդապետական արուեստէն եւ ընդհանուր մանկավարժութենէն:

Գիրքս ինչպէս նաեւ իր անգրիբէն թարգ-

մանուկները (կատարուած Նորին վստմ. դուկտոր Մէսմերէ, արքեպ. Միլվանգէի) մեծ հասցոյով ընդունուեցաւ ինչպէս կ'ապացուցանին հաստատուեալ բազմաթիւ նստակները եւ շատ մը դուրատիրի դատաստանները, որոնք գերմաններէն երրորդ տրպագրութեան սկիզբը կը գտնուին:

Գրուածքիս մէջ արտայայտուած սկզբունքներուն համեմատ, քրիստոնէական մը շարադրեցի դպրոցներու համար (կաթողիկէ Գրիստոնէական պատանիներու համար) որ 1908ին տեսաւ եօթներորդ տրպագրութիւնը բարձրեալ ժողովրդական քրիստոնէական ալ որ այսօր 35 հազարէն աւելի գերմաններէն օրինակներ հրատարակուած է եւ տարը լեզուով թարգմանուած, այնպիսի յաջող արդիւնք պիտի չունենար, եթէ այս գրքին մէջ պաշտպանուած մանկավարժական սկզբունքներուն համեմատ շարադրուած չլլար:

Կրօնուսոյցին լաւ ծառայութիւններ կրնայ մատուցանել նաեւ իմ օրինակներու հաւաքածոյս:

ՅԶ. - ԴԱՍԱԻԱՆԿՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ

Բուն քրիստոնէականի ուսուցումը, հազիւ դպրոցի Գ. տարին կը սկսի. ուսուցման ընթացքը կ'ընդգրկէ հետեւեալ հինգ մասերը. 1. Երանուցում. 2. Գրիստոնէականի գաղափարին ընդարձակումը. 3. Բացատրութիւն, այսինքն մեկնութիւն պարունակածին (յատկանիշ ծանօթութեանց), եւ գաղափարին ընդարձակութեան (տեսակաց). 4. Պատճառաբանութիւն (հաստոյ ճշմարտութեանց մէջ՝ ճշմարտութեան ապացոյցներ, բարոյականի մէջ՝ այն պատճառները որ կամքի վրայ կ'ազդեն). 5. Գործնական կիրառութիւն:

Այնքան աւելի գաղափարին բացատրութիւնը եւ պատճառաբանութիւնը պէտք են համառօտ ըլլալ, որքան որ տղաք փոքր են: Նախասացեալ հինգ մասանց կարգը միշտ խիստ կերպով պահելու է: Երբեմն, օրինակի համար, նշանակուած է նախ պատ-

ճառաբանութիւնը ընել յետոյ բացատրութիւնը, կամ թէ նախ կարելի է գործնական կիրառութիւնը իրենց պարզել, երբ մանաւանդ տեսնուի որ տղաք զգացուած են եւ մեծազոյն պտուղ մը կը նախատեսուի:

Ա. Երանուցում. — Ուսուցիչը թող այնպէս վարուի՝ ինչպէս քահանայն բնութիւն վրայ: Վերջինս քարոզ սկսելէն առաջ, բնաբան մը կը ընէ, յորում համառօտի կ'ակնարկէ բոլոր իր ըսելիքը: Այսպէս ալ ուսուցիչը իր քրիստոնէականին նիւթը ծանուցանէ կարճ նախադասութեամբ մը: Թանձարարելի է նաև անմիջապէս գրել տախտակին վրայ համապատասխան համադրական բառ մը:

Բ. Գաղափարի ընդարձակումը. — Այլ եւ այլ տեղեր քահանայն քարոզէն առաջ կը կարդայ կամ կը զուրջէ բնութիւն. Գրքէն ինչ ինչ մասեր, այսինքն նոյն օրուան Առաքելոց թուղթը կամ Աւետարանը. ընդհանրապէս անոնցմով կը սկսի իր քարոզը: Այսպէս ընէ դպրոցներու մէջ ուսուցիչը. իրբև մեկնումի կէտ՝ ընտրէ Աստուածաշունչի կտոր մը, ուսկից կարենայ դիւրութեամբ իրը հետեութիւն բերել քրիստոնէականին համապատասխան գաղափարի:

Որով, օր. համար մկրտութեան վրայ խօսած միջոց, Յիսուսի մկրտութիւնը պատմելէն սկսի. դրոշմի մեկնութեան միջոց՝ Հոգեգալստեան տօնին վրայ խօսելէն. Հաղորդութեան վրայ՝ վերջին ընթրիքէն ետքին: Աստուածաշունչի յարմար պատմութիւնը սակայն պէտք չէ վերի վերանց մէջ բերել, այլ ընդարձակօրէն պատմելու է, որպէս զի տղաքը բացայայտ կերպով ճանչնան թէ ինչպէս անկողջ քրիստոնէականի ճշմարտութիւնը առաջ կու գայ: Թէպէտ եւ արդէն առաջուց պատմութիւնը լսած ըլլան, ուսուցիչը պէտք է կրկնել զայն, կամ զարտադրութեամբ մը, գրքէն կարդալ տալ. որովհետև եթէ ուզէ զայն տղոց պատմել տալ, ասոնք ընդհանրապէս կը սխալին, ինչ որ շփոթութիւն եւ ժամանակի կորուստ կը պատճառէ:

Իթէ աստուածաշունչի յարմար պատմութիւն մը չկայ, զարտուղութեամբ թող ընտրէ նմանութիւն մը կամ օրինակ մը սովորական կեանքէն, կամ սուրբի մը կեանքէն, կամ քաղաքական պատմութեանէն. և ան մեկնումի կէտն ըլլայ:

Այսպէս, օր. համար սրբաբար շնորհքը կրնայ շատ լաւ բացատրուիլ, օգտուելով, երկաթը կրակին մէջ դիտողութենէն. հոգեորական հաղորդութիւնը՝ պատմելով անօթի մեռնելու դատապարտեալի մը պատմութիւնը:

Ընդհանրապէս Աստուածաշունչի պատմութիւն մը միայն կամ օրինակ մը կը բաւէ: Երբեմն սակայն օգտակար կամ կարևոր պիտի ըլլայ ուրիշներ ալ յիշատակել, մանաւանդ երբ գաղափարը շատ դիւրաւ հասկնալի չէ կամ շատ նկարագրիներ ունի:

Այսպէս, զոյժումի գաղափարը այն ատեն միայն պարզ է, երբ զանազան օրինակներ յիշատակուին, օր. համար Անառակ Որդոյն, Պետրոսին, Դաւթին, Մագաղանացւոյն: Մկրտութիւն բառին երկայն սահմանը հաւասարապէս աստուածաշունչի զանազան դէպքերու պատմութեանքը կը պահանջէ: Այսինքն թող պատմեն Յիսուսի մկրտութիւնը, Խարայելացոց Յորդանանու անցքը և Նեեման ասորիի բժշկութիւնը:

Ինքնին յայտնի է, որ կարգացում կամ զորեղած պատմութիւնը պէտք է տղոցմէ կրկնուի: Ով որ քրիստոնէականը դասագրքին ընթերցմամբ կը սկսի, հոգեբանական վրիպակ մը կը գործէ:

Ով որ այսպէս զործելու ըլլայ, ծանօթութիւններ ստանալու համար Աստուծոյ հաստատած օրէնքը պիտի յեղաշրջէ: Տղաքը իմաստը լաւ պիտի չըմբռնեն, և միայն պարապ խօսքեր պիտի իւրացնեն: Որով իրենց կրօնական գիտութիւնը անտեղի նախադասութեանց թուրքակարար կրկնում մը միայն պիտի ըլլայ: — Պատճառը, որով ուսուցիչը պէտք է պատմութենէ մը սկսիլ, կը կայանայ ասոր մէջ:

1. — Այդ կերպով հաւատքի ճշմարտութիւնները աւելի դիւրաւ պիտի հաս-

կըցուին մանկութեան տկար հասողութեանէն:

2. — Այս յառաջացումը կը համապատասխանէ մեր կրօնքին բնութեան, որ յայտնեալ կրօնք մ'ըլլալով՝ պատմական դէպքերու վրայ կը յենու:

3. — Մտքի օրէնքները կը պահանջեն որ յառաջանանք տեսութենէն դէպ ի գաղափարը, ծանօթէն անծանօթը, և ոչ թէ վերացեալ նախադասութեամբ կամ բառերով սկսինք:

Յետոյ, պատմութեան դէպքը օգտակար ընելու է հետեւեալ կերպով. նախ քաղելու է անկողջ գաղափարին յատկութիւնները, զրեւոյ է զրատախտակին վրայ, և յետոյ ամբողջութեան մը վերածելու է, պատմութեան տեղ խօսքը կամ գաղափարը դնելով: Հուսկ, յատկութիւնները ծանօթացնելէն վերջ հարցաքննել անուան վրայ, և անուան ծանօթութենէն վերջ՝ յատկութեանց վրայ:

« Գաղափար, սահման, պարունակութիւն, ընդարձակութիւն, բաժանում » բառերուն բացատրութեանց համար հետեւեալները թող բաւեն. Տղան երբեմն ճնճող մը կը տեսնէ, երբեմն ծիծեռնակ մը, աղանի մը եայլն. և կը դիտէ որ բոլոր այս կենդանիները նման յատկարիւններ ունին (կը թռչին, ունին թև, փետուր, կտուց, ոտք և այլն): Այս կերպով կը հասնին « թռչուն » գաղափարին: Գաղափարի մը յատկութեանց ամբողջութիւնը, պարունակարիւն կը կոչուի: Իսկ էական բոլոր յատկութեանց թուարկումը՝ սահման:

Կատարեալ սահման մը պէտք է ըլլայ. 1. — Ծճրդիտ, այսինքն պէտք չէ ո՛ր և է կարևոր ծանօթութիւն պակսի (ապա թէ ոչ շատ սահմանափակ է). պէտք չէ ալ շատ բան բովանդակէ (ապա թէ ոչ շատ ընդարձակ է): 2. — Սկզմ և համասօտ, այսինքն աւելորդ խօսքեր պէտք չէ պարունակէ: Որով ուղիղ չէ այս սահմանը. « Հրեշտակները, պարզ հոգիներ են, որ միտք և կամք ունին բայց մարմին չունին », որովհետև պարզ հոգիները ըստ ին-

քեան էութիւններ են, որ միտք և կամք ունին այլ ոչ մարմին: Յ. — Պայծառ, այսինքն պէտք չին դժուարմբանի բացատրութիւններ բովանդակել: Բոլոր այն առարկաները, որոնց կը պատշաճին գաղափարին յատկութիւնները, կը վերաբերին իր ընդարձակութեան: Որով «Խորհուրդ» գաղափարին ընդարձակութեան կը վերաբերին, մկրտութիւն, զորոմ, հաղորդութիւն, խոստովանանք հայն: Գաղափարին ընդարձակութիւնը մանր նշանակելով, կ'ունենանք բաժանում մը: Գաղափարներէն ոմանք իրենց շրջանակին մէջ ուրիշ գաղափարներ ունին, որոնք ալ իրենց կարգին հաւասարապէս ուրիշներ կը բովանդակեն: Առաջինները կը կոչուին ընդհանուր գաղափարներ. միւսները մասնական: Այսպէս «Առաքինութիւն» ընդհանուր գաղափար մ'է, վասն զի իր պարունակին մէջ մասնական ծանօթութիւններ ունի (աստուածաբանական և բարոյական առաքինութիւնք):

Օրինակ Գաղափարներու Ընդլայնման: — Մուրք Հաղորդութեան խորհուրդին գաղափարը հետեւեալ կերպով կ'ընդարձակուի. նախ վերջին ընթերցանք պատմութիւնը ընկու է. յետոյ պէտք է հարցնել. Ուրեմն Յիսուս ի՞նչ առաւ իր ձեռաց մէջ (հաց): Ի՞նչ խօսք ըսաւ անոնց վրայ, (Առէք և կերէք այս իմ մարմինս է): Այս խօսքերն ըսելէն վերջ Յիսուս ի՞նչ ունէր իր ձեռաց մէջ (իր մարմինը, իր միսը): Եթէ տղան պատասխանելու ըլլայ «հաց», ուսուցիչը թող յաւելու. «Ի՞նչպէս կրնայ Յիսուս իր ձեռքը հաց ունենալ երբ ինքն իսկ կ'ըսէ. Ասիկայ իմ մարմինս է. Ուրեմն այլևս, ինքը իր ձեռաց մէջ ունէր իր մարմինը, իր միսը: Արդ Յիսուսի այս մարմինը միշտ առաջուան պէս կը տեսնուէր. հացին երևոյթն ունէր, գոյնը, համը, կշիռը, հոտը: Մենք աւելի կարճ կերպով կ'ըսենք. ան՝ հացին տեսակներն ունէր»: Այս խօսքերը, «Յիսուսի մարմինը հացին տեսակաց ներքև» տարտակին վրայ գրուին: — Յետոյ բաժակին անցնելով հարցնէ. Ի՞նչ կար ա-

ռաջ բաժակին մէջ. (գինի). Ի՞նչ ըսաւ Յիսուս գինիին վրայ (Ասիկայ իմ արիւնս է). հիմայ ի՞նչ կայ բաժակին մէջ, (Յիսուսի արիւնը): Այն պահուն որ յանկարծ տղայ մը պատասխանէ «գինի», ըսէ. Ի՞նչպէս կրնայ հիմակ բաժակին մէջ գինի ըլլալ եթէ Յիսուս ըսաւ. Ասիկայ իմ արիւնս է. Ուրեմն բաժակին մէջ Յիսուսի արիւնը կայ: Սակայն Յիսուսի այս արիւնը դեռ առաջուան պէս կը տեսնուէր. անիկայ գինիին գոյնն ունէր, համը և հոտը, մենք՝ աւելի համառօտ կերպով, կ'ըսենք, ան գինիին տեսակներն ունէր: Այս խօսքերն ալ տարտակին վրայ կը գրուին:

Արդ տեսէք տղաք, փոխանակ ըսելու «Յիսուսի Գրիստոսի մարմինը հացին տեսակաց ներքև» և «Յիսուսի Գրիստոսի արիւնը գինիին տեսակաց ներքև», աւելի համառօտ կ'ըսենք: Ս. Հաղորդութեան խորհուրդը: Արդ տարտակին վրայ կը գրուի,

«Մարմին Յիսուսի Գրիստոսի հացին տեսակաց ներքև»
 Ս. Հաղորդութիւն }
 «Արիւն Յիսուսի Գրիստոսի գինիին տեսակաց ներքև»:

Վերացական ծանօթութիւնները դժուար է վերացեալ կերպով սահմանելն: Հոս օգտակար է վերացեալ գաղափարը թանձրացեալ փոխել. փոխանակ ըսելու «Խոնարհութիւնն է...» ըսուի « Խոնարհ է այն, որ...»: կամ թէ վերացեալ գաղափարին բայ մը աւելցուի. « Խոնարհութիւնը անոր մէջ կը կայանայ որ...»: փոխանակ ըսելու «ընկերսիրութիւնն է...» ըսուի «մենք ընկերսիրութիւնը ցոյց կու տանք...»: Որով և ոչ իսկ հետեւեալ սահմանը կարգաւորապէս լաւ է. «Մկրտութիւնը խորհուրդ մ'է որուն մէջ...». թանձրացեալ ձևը լաւագոյն է «Մկրտութիւնը կը կատարուի...» Այսպէսով սահմանը ուրիշ ո՛ր է կերպով դժուարին պատմութեան ձև կ'առնէ և տղուն պարզ ու հասկընալի կ'ըլլայ:

Չանց ընելու է այն ծանօթութեանց

սահմանը որ բարոյական կամ կրօնական մեծ կարևորութիւն մը չունին, վասն զի կրօնական Ուսուցումը լեզուական հրահանգ մը չէ: Նման գաղափարները նոյնանիշ ծանօթ բացատրութիւններով պարզաբանելու է:

Գ. Գաղափարին Բացատրութիւնը: — Տղաքը գաղափարը պէտք են լաւ ըմբռնել, որով պէտք է իրենց հասկցնել 1. գաղափարին պարունակութիւնը (յատկութիւնները), 2. գաղափարին շրջապատը (տեսակները), 3. կրօնական միւս ճշմարտութեանց հետ յարաբերութիւնները, 4. ջանալ գաղափարը Յիսուսի և Եկեղեցոյ հետ միացնել:

Գաղափարին պարունակութիւնը և շրջապատը մասնաւորապէս օրինակներով, (պատմութիւն), նմանութիւններով և հակադրութիւններով կը բացատրուին: Անոր կրօնական մերձաւոր ճշմարտութեանց հետ ունեցած յարաբերութիւնը պարզաբանելու է այն պատճառաւ որ, այս միջոցով իւրաքանչիւր ճշմարտութիւն լաւ կ'ըմբռնուի, և լաւագոյն ևս կը ճանչցուի զբիւստոնէական կրօնքի գերազանցութիւնը: Գործնալ այս կերպով վարդապետութիւնը, որուն վրայ կը խօսուի, այնքան դիւրաւ չի մոոցուիր: — Մի և նոյն պատճառաւ պէտք է դուրս ցատկեցնել վարդապետութեան Քրիստոսի հետ ալ ունեցած զօղը. վասն զի մեր զբիւստոնեայ կրօնքը կատարեալ ներդաշնակ պատկեր մըն է, որուն կեդրոնը աշխարհիս Փրկիչն է:

Պիտաւորապէս հարկաւոր է իրարու հետ յարաբերութեան դնել, բարոյականի և հաւատքի վարդապետութիւնները: Ամէն մէկ հաւատոյ ճշմարտութեան մեկնութեան մէջ, պէտք է ցուցնել թէ բարոյական ինչ սկզբունք անկից կը հետևի. բարոյական վարդապետութեանց վրայ ճառած միջոց պէտք են յիշուիլ հաւատոյ այն ճշմարտութիւնները որ բարոյական վարդապետութեան պահպանութեանը կը յորդորեն: Եւ այս հետևեալ պատճառներով. 1. Հաւատքը առանց բարոյականի անպատեղ է, և բարոյականը առանց հաւատքի մղիչ

գորութիւն չունի: 2. Հաւատքը առանց գործի մեռեալ է, և գործերը որ հաւատքէն առաջ չեն գար՝ արդիւնաւոր չեն: 3. Հաւատքի և բարոյականի ճշմարտութիւնը իրարու միացնելով՝ կ'արգիլուի որ զբիւստոնեայն զուտ արտաքին երևոյթնելով գոհ ըլլայ, ինչպէս որ Յիսուսի ատեն Հրէից մեծամասնութիւնը այնպէս էր:

Գաղափարին բացատրութեան մէջ թէ ո՛րչափ կարելի է առաջ երթալ, կախումն ունի նաև այն դասարանէն՝ յորում ուսուցումը կ'աւանդուի: Պէտք է աւելի ընդարձակ ըլլալ բարձրագոյն դասարաններու մէջ: Ինչպէս որ ծառը աճելով կը մեծնայ, այսպէս ալ մեկնութիւնը ամէն բարձրագոյն կարգի մէջ կարելի է աւելի ընդլայնել:

Պիտաւորաբան. — Գաղափարի ընդարձակման մէջ՝ համադրական կերպով յառաջելու է ուրեմն, որովհետև հետզհետէ գաղափարին յատկութիւններով ամբողջութիւն մը կը կազմուի: Իսկ գաղափարի բացատրութեան մէջ պէտք է յառաջել վերլուծականաբար, վասն զի գաղափարը իր յատկութեանց մէջ կը տարբաւուծուի և աւելի կը պարզուի: Երկու ոճերն ալ, համադրականը և վերլուծականը, ուսուցման մէջ միասին կ'ընթանան, ինչպէս մարդուն երկու ոտքերը ըլլելու ատեն: Այսպէս ոճ մը ուրիշի մը կը յաջորդէ: Ով որ համադրա-վերլուծական (sintetico-analitico) ոճով առաջ կ'երթայ, կը գործէ անոր նման, որ գործից մը կը կազմէ (երկանիւ, զէնք ևայն) իր մասերով, և յետոյ նորէն կը ըսկէ գանոնք:

Օրինակ. — «Մկրտութիւն» գաղափարին բացատրութիւնը.

Ա. Էն առաջ պէտք է գաղափարին յատկութիւնները բացատրել:

1. «Ջրով լուալ»:

Ջուր. — Պէտք է ստոյգ ջուր ըլլայ, անձրևի կամ գետի, բղխող ջուր, և կամ աղբերի: Ուրեմն ոչ քացախ, ոչ գինի, ոչ ոգի ևայն, քանի որ այս հեղուկները ջուրէն զատ ուրիշ գոյացութիւններ կը ներփակեն: Ջուրը պէտք է օրհնուած ըլլայ:

ասոր համար կ'որհնուի Մկրտութեան աւազանը Աւագ շաբաթ և Հոգեգալստեան նախընթաց օրը: Ի հարկին բաւ է նաև ոչ օրհնեալ ջուրը:

«Լուալ» — Երեք անգամ ջուրը խաչածև մկրտելոյն վրան վրայ կը լեցընեն: Ի հարկին բաւ է թրջել կամ սրակել մարմնոյն ու և է մէկ կողմը: Առաջին դարերուն մէջ սովորութիւն էր երեք անգամ մխրճելը, անոր համար մասնաւոր աւազաններ կային: Այժմ այս սովորոյթը Արևելեան Եկեղեցւոյ մէջ դեռ գոյութիւն ունի:

2. Ջուրը հեղած միջոց կ'արտասանեն Յիսուսի հաստատած բառերը: Այս բառերը են. «Էս մկրտեմ զքեզ յանուն Հոր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»: Հոս թող յիշատակուին այն խօսքերը զորս Փրկիչը ուղղեց իր Առաքելոց, Համբարձումէն առաջ, և Յիսուսի մկրտութեան միջոց Երրորդորդեան անձանց յայտնութիւնը: Ուրեմն անվաւեր է մկրտութիւնը երբ բուսի «Էս մկրտեմ զքեզ յանուն ամենասուրբ Երրորդութեան» կամ «յանուն փրկչին»: Յիսուսէ հաստատուած այս խօսքերը այն պահուն պէտք են արտասանելի, երբ ջուրը կը հեղուի: Որով վաւեր պիտի չըլլայ այն մկրտութիւնը, յորում նախ ջուրը հեղուի յետոյ բառերը արտասանուին և կամ անոր հակառակը:

3. — Մկրտութեան արդիւնքները (թողութիւն մեղաց, սրբարար շնորհք, Աստուծոյ որդի կ'ընէ, ժառանգորդ արքայութեան և անդամ Եկեղեցւոյ) Յիսուս ուղեց զանոնք տեսանելի ընել տալ ջուրի գործածութիւնը հաստատելով. Եկեղեցին այլ արարողութեանց յաւելումով: Հիմայ ջուրին արդիւնքները բազմապատու է մկրտութեան արդեանց հետ, և բացատրելու է նաև մկրտութեան ընկերող արարողութեանց նշանակութիւնը: Ջուրին արդիւնքներն են: Ջուրը մարմնոյն անմաքրութիւնը կը սրբէ. Մկրտութիւնը հոգւոյն անմաքրութիւնը, սկզբնական և բոլոր միւս մեղքերը: Ջուրը կը մարէ կրակը, մկրտութիւնը զմեզ կ'ազատէ քաւարանի և դժոխքի կրակէն, և

հետևաբար ներուձն կը շնորհէ բոլոր պատիժներուն: Ջուրը ալիւրը կը զանգէ. մկրտութիւնը զմեզ եկեղեցւոյ հասարակութեան կը միացնէ: — Գլխաւոր արարողութիւններն են: — Սպիտակ զգեստը՝ սրբարար շնորհքը կը նշանակէ, այսինքն՝ մկրտութեան անմեղութիւնը: Գլխուն օծումը՝ (որ թագաւորաց օծման միջոց կը գործածուի) թէ մկրտեալը երկնից թագաւորին որդի կ'ըլլայ և որով Որդի Աստուծոյ: Վառեալ մոմը՝ թէ մկրտեալը Հոգւոյն Սրբոյ լոյսը ընդունած է և իր դէպի արքայութիւն ճամբորդութեան ատեն ուղևորի մը կը նմանի որ խաւարին մէջ լոյս մ'ունի: Գաւթէն Եկեղեցի մուտքը կը նշանակէ թէ մկրտեալը Եկեղեցւոյ անդամ կ'ըլլայ կայն կայն:

Բ. — Ապա բացատրելու է զազափարին ընդարձակումը (տեսակները):

Դիտել տալու է թէ բացի եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր մկրտութենէն, կայ նաև ի հարկի մկրտութիւնը. թող բուսի թէ ի սկզբան, (ե՛րբ) հանդիսաւոր կերպով կը մատակարարուէր մկրտութիւնը. յետոյ բեւելու է թէ ո՛ր և ուսկից կարելի է և պէտք է մատակարարուի ի հարկի մկրտութիւնը: Վերջապէս օրինակներու միջոցաւ թող բացատրուին այս բառերը «Մկրտութիւն փափագանաց» «Մկրտութիւն արեան»: Թող յիշուին հին կտակարանի արդարները, Բեթղեհնմի մանկանց, Յովհաննու Մկրտչի, Մակարայեցի Եօթն եղբարց և ուրիշներու մահերը կայն:

Գ. — Յետոյ կրօնաւոյրը «մկրտութեան» զազարարը յարակից կրօնական ճշմարտութեանց միացնէ. մասնաւոր նկատողութեան անելու է սկզբնական մեղքին, Սրբարար շնորհքին վարդապետութիւնները: Յետոյ յարաբերութեան մէջ զնելու է մկրտութիւնը Գրիստոսի հետ:

Համառօտիւ պէտք է պատմէ Գրիստոսի մկրտութիւնը, յորում մերինին նման բան մը պատահեցաւ: Յիսուսի վրայ կ'իջնէ Հոգին Սուրբ, մենք Մկրտութեան ատեն սրբարար շնորհքը կ'ընդունինք պարզ և Հոգւոյն Սրբոյ: Հայրն Աստուծոյ իր ձայնը

կը լսեցնէ, «Այդ է իմ սիրելի Որդին» . մկրտութեամբ զմեզ ալ իր Որդիքը կ'ընէ . երկինքը բացուեցաւ . նոյնպէս մեզի ալ, որ արքայութեան ժառանգորդ կ'ըլլանք : Ասոնցմէ վերջ նորէն կրկնելու է Յիսուսի արտաբերած բառերը , նախ քան երկինք Համարձուժը . « Գնացէք բոլոր ժողովուրդներուն քարոզեցէք հայն » և միւսները . « Ով որ վերստին ջրով և հողով չի ծնանի , Աստուծոյ արքայութիւնը պիտի չկարենայ մտնել » : Ասոնց կցեն Մկրտութեան զօրութեան և հարցկաւորութեան վրայ դասուսուցումը :

Գ. — Պատճառարանութիւնը (motivazione). Ասիկայ հաւատոյ և բարոյականի ճշմարտութեանց համար մի և նոյնը չէ : Նկատմամբ առաջինին յիշատակելու է այն պատճառները որով ասոնք ճշմարիտ են . իսկ երկրորդին նկատմամբ այն պատճառները որով անոնք պէտք են գործադրուիլ : Հաւատոյ ճշմարտութեանց համար յատուց բերուին ապացոյցներ , բարոյական ճշմարտութեանց համար շարժատիքներ :

Պատճառարանութիւնը կարեր որ է , վասն զի առանց պատճառաց հանաչողութեան մեր հաւատքը մեր գործելու կերպը անբաւնաւոր պիտի ըլլար : Բաց աստի Աստուած մեզմէ բնաւոր յարբացք մը կը պահանջէ (Հո. ԺԲ. 1) : Աստուածային վարդապետն ալ պատճառներ կը բերէր , մասնաւորաբար յօժարակամ կը յիշէր Աստուծոյ խօսքը , դարձեալ մարդկային ողջամիտ դատաստանը (օր. ապացոյցներու համար թէ շաբաթ օրն ալ լաւ բան կարելի է ընել . թէ ինքը սատանին օգնութեամբ չէր գործեր) . ժողովրդական դատաստանը , մէջ բերելով ասացուածներ և առածներ , և հուսկ յաւիտենական երանութիւնը՝ զայն ստեպ իր վարդապետութեան հետեողաց առջև դնելով : Որուն համար Ս. Օգոստ. այս սկզբունքը կը սահմանէ . « Էբրախայից պէտք են բացարձակ մէն մի վարդապետութեան շարժառիթը և պատճառը » : (Յաղագս . հրահանգելոյ զտգէտս) :

ա) Հասարակ շնորհակցեանց պատճառարանութիւնը : — Ասոնք աւելի ևս ոյժ

կ'առնեն ապացոյցներու յիշատակութեամբ . Որով լաւ չէ տղոց ըսել . « Պիտի ցուցնենմ ձեզ թէ այս բանը ստոյգ է » . որովհետև ասով՝ հաւատոյ վրայ երկրայանք կրնայ արթնցնել , և իր փափագածին հակառակը պիտի ընդունի : Յետոյ փաստերը պէտք չեն չափազանց դժուար ըլլալ , այլ պարզ և դիւրամբոնելի : Տղոց համար , աստուածաբանական ապացոյցները գործնական չեն , հաւատարապէս ինչպէս գործնական չէր երկաթեայ զրահները պատանի Դաւթին համար : Մի և նոյն պատճառաւ , պէտք չէ շատ փաստեր մէջ բերել : Ապացուցութիւնը պէտք է այնքան ընդարձակ ըլլայ որքան որ աշակերտը չափահաս են : Իրբև փաստ հետեւեալները մէջ բերուին :

1. — Աստուծոյ խօսքը . այսինքն , Յիսուսի պատուիրանները և սուրբ Գրոց խօսքերը : Ասոնք միշտ պէտք են առաջնութիւնն ունենալ , որովհետև Աստուծոյ խօսքը , յինքեան , է՛ն մեծ հեղինակութիւնն ունի : Աստուածաշունչի խօսքը շատ մը առաւելութիւններ ունի , ան մասնաւորապէս պարզ է և թանձրացեալ , սրտին կը դպչի , ստեպ զարմանալի արդիւնք ունի , և պէտք չունի ուրիշ կերպով ապացուցուելու : Ուստի ուսուցիչը պէտք չէ Ս. Գրոց խօսքը այլայլէ , այլ որչափ որ կարելի է հաւատարմաբար յիշէ զայն : Եւ որպէս զի աւելի դիւրութեամբ մը միտք պահուի , պէտք է նշանակել թէ այն բառերը տեղւոյ , ժամանակի , անձի ո՛ր հանգամանաց մէջ արտաբերուած են :

Ասիկայ գատ թող խնայէ տղոց շատ և երկար կոչեր ընելէ : Ինչպէս միշտ , ներկայ առթիս մէջ ալ վարժապետին լաւ ընտրողութիւնն ընելը կը յայտնուի : Ուսուցիչը յիշեցնելով ամենէն առաջ Յիսուսի պատուէրները , հին կտակարանի մարգարէից նմանի , որ իրենց գուշակութեանց աւելի ոյժ տալու համար կը գործածէին հետեւալ խօսքերը , « Այսպէս ասէ Տէր » : Աստուածային խօսքերուն հետ մասնաւորապէս յիշատակուին եկեղեցւոյ վարդապետական որոշողութիւնները :

2. — Պատմական դէպքեր, այսինքն է, դէպքեր սրբազան, եկեղեցւոյ, քաղաքական պատմութենէն, ինչպէս նաև սուրբերուն կեանքէն : Աստուածային վարդապետն ալ իր խօսքերուն ոյժ տալու համար, իրողութիւնները մէջ կը բերէր, ըսելով. «Եթէ չէք ուզեր ինծի (խօսքերուն) հաւատալ գործերուն հաւատացէք (Յովն. Ժ. 38) : Գործերը ընդհանրապէս անկի մեծ ոյժ ունին քան խօսքերը : Ասիկայ մասնատրապէս դաստիարակութեան մէջ կը դիտուի : Դաստիարակը կընայ ստէպարի օրինակով լաւագոյն պտուղներ ստանալ, քան թէ պերճախօս յորդորներով : Սրբազան պատմութեան դէպքերու ստէպարի յիշատակութիւնը շատ կարեոր է, վասն զի Աստուած ինքնին յայտնած է ինքը՝ զինքը աւելի դէպքերով քան խօսքերով : Հուսկ պատմական գործերը ըմբռնելի կ'ընեն կրօնական ճշմարտութիւնները : Ասոր համար պարզ անցողակի կերպով պէտք չեն յիշուիլ. այլ պատմելու է և կրօնական ճշմարտութեան հետ յարաբերութեան դնելու է :

3. — Ասածներ, (որ իրենք իրենց մէջ ժողովրդական զգացումը կը ցոլացնեն) և նշանաւոր կամ սուրբ մարդոց տեսութիւններ : Մարդկային այս վկայութիւնը կը ծառայեն պարզապէս իբրև նեցուկ միւս փաստերուն. նշանաւոր մարդոց տեսութիւնները յիշատակելով՝ կը թելադրեն նաև պատանեկութեան յարգանք դարուն բազմերախտ անձանց :

4. — Բանաւոր փաստեր : Բանը հոգւոյն աչքն է, Բանով կընանք ճանչնալ հաւատոյ քանի մը սկզբունքներուն ճշմարտութիւնը : Փրկիչն ալ բանաւոր փաստերուն գործածութիւնը կ'ընէ :

Մակայն ասոնք աւելի ստէպ գործածելու է քարձրագոյն դասարանաց մէջ, ուր ստուգել աշակերտները աւելի դիւրաւ կ'ըմբռնեն : Պէտք է այդպէս անհրաժեշտ, կամ աշխարհքի ծոռ սասածներուն դէմ հաւատոյ վարդապետութիւններէն գոմանս պաշտպանել : Այս պաշտպանութիւնը պէտք չէ հակաձառութեան մը վերածուի, որովհետև ու-

սուցիչը իր առջև կըծնէր թշնամիներ չունի : Յետոյ շատազովականի զխաւոր նւպատակն է տղաքը կարող ընել պատրաստակներով պատասխանելու կըծնէր ծաղրողներուն :

Հակառակորդաց յարձակմանց ջրումին մէջ՝ ուշադրութիւնը պէտք է հրաւիրել այն նախապաշարմանց՝ որոնց վրայ աւանդ չիմուած են, և ցուցնել, որ մեր ուղղափառ ճշմարտութիւնը այն իմաստը չունին ինչ որ կ'ընծայեն ուրիշ հաւատքի հետևողները : Ստոյգ չէ օր. համար թէ մենք սուրբերը կը պատուենք, որովհետև Յիսուսի վրայ վստահութիւն չունինք. թէ մենք կը պաշտենք պատկերները. թէ ազօթքով մը՝ որուն ներողութիւն մը միացած է, կ'ուզենք մեր ամենածանր մեղաց թողութիւնը ընդունիլ. թէ Գահակայապետը ամէն բանի մէջ անխալ կ'ընդունինք. թէ իբրև անխորապէս դատաւարտեաններ կը նկատենք բոլոր ուրիշ կրօնք խոստովանողները և այլն :

Աշխարհքի ստոռ ասածներ են, օրինակի համար. «Ինչ որ չեմ տեսներ անոր չեմ հաւատար » . « Կրօնքը երկրորդական բան մ'է » . « Ամէն կրօնք հաւատար է » . « աշխատաւորը պոթելու ատեն չ'ունի » և այլն :

Օրինակ նախադր ճշմարտութեանց պատճառարանութեանց համար : — Հոգոյ աւանդաբանը կ'սպացուցուի 1. Յիսուսի վճիռներով (« Մի՛ վախէք անոնցմէ որ մարմինը կը սպաննեն, այլ հոգին չեն կընար սպաննել » . Յիսուսի խօսքերը առ բարի աւազակը. հարուստ մեծատան և աղքատ Ղազարու տակը) : 2. Պատմական դէպքեր. (« Մովսէսի՛ յետ մեռնելուն՝ երևումը թեփուրի վրայ. Քրիստոսի մահուան ատեն երևումները) : 3. Ժողովուրդներու զգացումներ, օր. համար Հրէից (Յուդայ Մակարէի զոհը պատերազմի մէջ ընկածներուն համար. վշտահար Յակոբայ խօսքերը Յովսէփայ կորստեան վրայ), Գերմաններուն (վալհալլա), Յունաց (Տարտարու և Ելիսեան դաշար), Եգիպտացոց (հոգեփոխութիւնը) : 4. Բանի

(փափագ երջանկութեան մարդու մէջ, աստուածային արդարութիւն, և այլն):

բ). Բարոյական շնորհաբերական պատճառարանօրհներ: — Ասոնք ամենէն աւելի ոյժ կ'առնեն շարժառիթներ և պարտուց դրողմ մէջ բերելով:

1. — Իբրև առաջին պատճառ յիշատակուի Աստուծոյ կամքը: Արդէն շատ կարևոր բան է է՛ն առաջ Աստուծոյ կամքը վկայութեան բերել որպէս զի դրոնք տղաքը՝ որ իրենց զործերը կատարեն, նայուածքին Աստուծոյ յառած, վասն զի այս միջոցով միայն անոնք կրնան արդիւնատր ըլլալ իր առջև:

Բաց աստի Աստուծոյ կամքը, մանաւանդ տղոց համար, է՛ն յայտնի շարժառիթն է: Այս, է՛ն զօրատրե ալ է, որովհետև, այսպէս այնքան դիւրութեամբ չեն դեղևիր աղաւաղուած մտքին իմաստակութիւններէն և խանգարուած կամքին առարկութիւններէն: Կը տեսնենք որ Յիսուս իսկ փորձութեան միջոց Աստուծոյ կամքը կը վերլիշէր (Մտթ. 4):

2. — Պատճառներ են, զործին բարի կամ զէ՛ հետևութիւնները: Այս հետևութիւնները կամ յեակական են (այսինքն առաջ կու գան ընական կերպով) ինչպէս օգտակարութիւն կամ վնաս՝ հոգւոյն, ըզզացման, մարմնոյն, ընչից, պատուոյն. կամ գերբնական են (որ կը ճանչցուին գերբնական հաւատքի միջոցաւ) այսինքն շահ կամ կորուստ սրբարար շնորհաց կամ արժանեաց. բարեբախտ կամ անբախտ մահ, դատաստան Աստուծոյ ներող կամ անաչառ, վարձք կամ պատիժ յետ մահու: Կարևոր է շարժառիթներ յառաջ բերել վասն զի ամէն մարդ աւելի կամ նուազ եսասեր է, որով այն զործերուն մէջ ուր զոհողութիւն կամ անձուրացութիւն կը պահանջուին կը հարցուի, «ինչ օգուտ անկից»: Եւ որովհետև վարձ կամ պատիժ, իրարու հակընդդէմ են, զօրաւոր լծակ մ'են մեր տկար կամքին, անոնք ստուգուի ամէն դաստիարակութեան մէջ կը զործաժուտին:

Հարկ է դիտել որ Աստուածային բա-

րութիւնը տասնարանեայ պատուիրանաց հրատարակութեան մէջ, անոնց ինչ ինչ զրգրոնք աւելցուցած է. ինչպէս օր. համար չորրորդ պատուիրանին մէջ « Եթէ կուզես երկրի վրայ երկարակեաց ըլլալ »:

Ինչպէս և գերբնական պատճառները զոգրակչորէն պէտք են զործածուի: Միայն ընականները չեն բաւեր, վասն զի փորձութեան միջոց քիչ զօրութիւն ունին, և կը հալին, ինչպէս ձիւնը արեւն:

Ասով սակայն բարի կամ չար հետևութեանց չոր ցուցադրութիւն մը միայն չի բաւեր. որովհետև յիշողութիւնը կը ծանրարեանի, բայց կամքը չի շարժիր: Աւելի, հետևութիւնները պէտք են լաւ և յայտնաբար (intuitivamente) նկարագրուի, և ան ալ պատմութեանց (օրինակներու) միջոցաւ: Թէպէտ և պատճին երկիւղը տղոց մէջ է՛ն զօրաւոր շարժառիթն ըլլայ, լար հետևութիւնները սակայն չափազանցօրէն պէտք չեն շեշտուի որպէս զի կրօնքը վախնալու բան մը չի նկատեն:

Գարձեալ զործին գէ՛ջ հետևանքը ցուցնելով, պէտք չեն իրը չար օրինակներ շատ անգամ նշանաւոր անձինք մէջ բերուին. որովհետև ատրկայ կրնայ զիրենց դիւրաւ առաջնորդել անոնց հեղինակութիւնը և արժանապատուութիւնը անարգելու, և մեղքէ չըմեղելու:

3. — Քանի մը դիպուածոց մէջ, զօրաւոր շարժառիթ մ'է հաստոյ յարակից շնորհաբեր յիշատակելը, օր. Երկրորդ պատուիրանին մէջ: Եթէ ոմանք Աստուծոյ անունը պարապ տեղ կ'արտարբն պատճառն այն է որ Աստուծոյ մեծ վայելչութիւնը խորհրդածած չեն: Ուստի կրօնաւոյցը Բ. պատուիրանին մեկնութեան ատեն խնամք տանի տղոց սրտին մէջ դրոշմելու Աստուծոյ ամենակարողութեան և անհուն մեծվայելչութեան յարգանքը, և անոնց մէջ ազդէ Անոր խորին երկիւղը: Ութերորդ պատուիրանին վրայ ճառած ատեն, ցուցնէ իր կարգին, Աստուծոյ անհուն ճշմարտախօսութիւնը. Աստուծոյ սի-

բոյն մեկնութեան մէջ՝ անսահման բարու-
թիւնը հայն:

4. — Մարդս կը զրգուի բարոյական
պատուէրներու պահպանութեան, նաև օ-
րինակներէ: Ամենէն առաջ, օրինակ են
Յիսուս և Սուրբերը: Նման բան մը կը
պատահի արտաքին նիւթերու ուսուցման
մէջ: Ընթերցման, գծագրութեան, գեղա-
գրութեան ուսուցման մէջ տղան կը հրա-
հանգուի իր առջև դրուած օրինակը հա-
մեմատ. լեզուի ուսուցման մէջ՝ օրինակի
տեղ կը բռնէ ուսուցչին և ընթերցման
գրքին լեզուն: Անցեալ ժամանակաց մէջ
սովոր էին աւելի ահմաններու վրայ գրա-
դիլ, բայց այսօր էն կարևորը, հրահանգը
և օրինակին նմանութիւնն է:

5. — Հուսկ ասակ դարձած ըստածը-
ններն ալ զարմանալի ազդեցութիւն կ'ընեն
կամքին և մտքին վրայ:

Օրինակ բարոյական ձյնարտոբանց շար-
ժափրին համար: — Ծոնապահտօրեան պա-
տուիրանին շարժափրը 1. Աստուծոյ կամ-
քը, Եկեղեցւոյ պատուիրանները: — 2.
Շարժափրներ. Ծոնապահտօրեան քնական
օգտակարտօրինը հոգիին համար (մտաց լու-
սաւորութիւն, կամքի ուժգնութիւն) և մար-
մնոյն համար (անուրբ առողջութեան, եր-
կայնակեցութիւն): Գերբնական օգտակա-
րտօրինը. մեղաց ներողութիւն, աղօթքի
ընդ փոյթ ընդունելութիւն, վարձը յետ
մահուան: — 3. Օրինակներ. Քրիստոս,
Դանիէլ, Նիւնուէ, Կուննիլիոս հարիւրապե-
տը, Մովսէս, Լիլիա, նաև Հիպպոկրատ,
հայր բժշկութեան. 4. Ասակ դարձած ը-
ստածքներ. « Ով որ քիչ կ'ուտէ երկար
ատենի համար կ'ուտէ »:

Ե. — Գործնական կիրարկութիւնը: Ո-
րովհետև կրօնական ճշմարտութիւնները ոչ
միայն գիտնալու և զիտրութեան առար-
կայ են՝ այլ պէտք են էն առաջ կեանքին
մէջ գործածուիլ, ուսուցիչը պէտք է ջա-
նայ գանոնք գործնական կեանքին պատ-
շահեցնելու: Նախ ասիկայ կ'ըլլուի ստի-
պելով տղաքը, որչափ որ կարելի է, ան-
միջապէս կատարելու այն պարտքերը որ
կրօնքի մէն մի ճշմարտութեանց հետևու-

թիւնն են: Հոս ստուգել, զլիսաւորապէս
կրօնաւոյցի կանոնադրեան թողու է, թէ
ի՞նչ կերպով պէտք է ընել յիշեալ հրա-
հանգը: Սովորաբար այս ընելու է միայն
ներքին առաքիներեանց համար: Օրինակի
համար, յետ գոնութեան աղօթքին և երախ-
տագիտութեան պարտքին վրայ խօսելու,
կարելի է անմիջապէս շնորհակարտօրեան ա-
ղօք մը կատարել տալ: Յիսուսի աստուա-
ծութեան ուսուցումէն վերջ, նստաւոր ներ-
գործութիւն մը. յետ մեկնելու տղոց՝ մե-
ռելոց յարութիւնը, յոսոյ ներգործութիւն
մը. յետ ճանելու Աստուծոյ սիրոյն վրայ,
սիրոյ ներգործութիւն մը. յետ աղօթքի
վրայ խօսելու, երկրպագութեան ներգոր-
ծութիւն մը. յետ զղումի՝ զգոհան հայն:
Այս առիթներուն մէջ գործնական կի-
րարկութիւնը՝ ամենէն լաւագոյն՝ աղօթքի
ձևով կը բացատրուի: Եթէ այս աղօթքը
համառօտ է, կրօնաւոյցը աւանձին կրնայ
զուրցել, յետոյ ամէն մէկուն կրկնել տալ
գայն, յետոյ բարոյ աշակերտաց միասին:

Եթէ երկայն է, կրօնաւոյցը կրնայ
պարբերութիւն առ պարբերութիւն զուր-
ցել և այնպէս կրկնել տալ. կամ կրնայ
բարձր ձայնով արտասանել, և տղաք լու-
թեամբ հետեին իրեն: Աղօթքի նման ներ-
գործութիւններ խոր ազդեցութիւն կ'ընեն
տղոց մտքին վրայ և կը նպաստեն որ
քրիստոնէականի դասը յիտարեան ժամ մը
դառնայ: Նաև այնպէս տպաւորութիւն կ'ը-
նեն որ ինչ որ առաջ մուտ էր իրենց աւելի
ևս կը պարզուի: Միասին զղման թող յոր-
դորէ զիրենց, և այս կերպով լաւ ևս կը
սովորին թէ ինչ է զղումը: Միասին զբզգէ
զիրենց յուսոյ և առ սէրն Աստուծոյ, և
այսպէս լաւ ևս պիտի սովորին թէ ինչ
է յոյսը և Աստուծոյ սէրը հայն: Եթէ
գործնական հրահանգը ուսուցման հետ կա-
րելի չըլլայ յարակցել, կրօնաւոյցը զէթ
պէտք է մէջ քերէ մասնական պարագաներ,
որ աւելի ստէպ կեանքին մէջ կը պատա-
հին, և որոնց մէջ պիտի գործադրեն յա-
րակից բարոյական վարդապետութիւնը:

Օրինակ. — կրօնաւոյցը մեռացման
վրայ կը խօսի: Ուսուցումը պտղաբեր ը-

նեւու համար պէտք է յիշատակել քանի մը դէպքեր յորում հարկ է մեռուցումը գործադրել: Տղոց հարկ է ըսել թէ պէտք չէ անյագօրէն կերակուրին վրայ խնամ, թէ ամէն գիտցածնին պէտք չեն դուրս թափել: Թէ պէտք չեն անհեթեթ կերպով ծիծաղել կամ շնչին պատրուակով գանգատիլ և այլն: Նա որ տղաքը պարտուց գործածութեան չի ստիպեր, նման է ճարտարագետի մը որ քարեր, կիր, փայտեղէն և շինութեան ուրիշ նիւթեր կը հաւաքէ բայց շինութեան ձեռք չի գարներ: Կամ երկաթագործի մը կը նմանի որ չի հետեւի այս սկզբունքին «Երկաթը տաք տաք ծծծելու է»:

Կրօնուսոյցին լաւ ծառայութիւն կը մատուցանեն մեծ ուսումնասիրութեամբ աշխատասիրտած քրիստոնէականները, որովհետեւ կը ցուցնեն իրեն թէ ուրիշ կրօնուսոյցներ ինչպէս սովոր են գործել:

Սակայն խնամքով պատրաստուած այս քրիստոնէականները՝ սկսակներուն միայն կրնան օգտակար ըլլալ: Ասոնք ալ սակայն պէտք չեն ստրկօրէն հետեւիլ այն քրիստոնէականներու, վասն զի ամէն կրօնուսոյց տարբեր յատկութիւններ ունի, որով յառաջացումի ուրիշ կերպ մը: Բաց աստի, տղաքն ալ ստէպ անակրկնիւ պատասխաններով կրօնուսոյցը նեղը կը դնեն, նոյն իսկ երբ արդէն ան ուսուցման ընթացքը կարգի դրած ըլլայ:

Օրինակներ Քրիստոնէականի Ուսուցման կրթութեան Խամար:

Յարուծիւն Արեւելոց

Ա. — Իրանուցում: — Նախ ըսել տալու է առաքելական հանգանակը, նշանակել « յարուծիւն մեռելոց » բառերը և տախտակին վրայ գրել: (Փարսնան՝ կաւելի է նաև բնաբան առնել, բնութեան զարթնումէն):

Բ. — Գաղափարին ընդլայնումը: — Կը պատմեմ, կամ բարձրագոյն դասարաններու մէջ կարդալ կու տամ, սրբազան պատմութեան մէջ, Ղազարոս յարու-

ծիւնը. պատմութիւնը անմիջապէս կրկնելու տամ: Յետոյ կը յաւելում: Այն կերպով որ Յիսուս Ղազարը յարոյց, վերջին օրը Ան պիտի յարուցանէ բոլոր մարդոց մեռեալ մարմինները:

Յիսուս }
 Յարուծիւն } յետին օրը
 մարմնոց } պիտի յարուցանէ մարմինները:

Գ. — Պատճառարևութիւնը: — Ո՛ւսկից գիտենք մենք թէ Յիսուս Քրիստոս մարդոց մեռեալ մարմինները պիտի յարուցանէ և զանոնք հոգւոյն պիտի զօզէ: 1. Յիսուսի խօսքերէն. «Պիտի գայ ժամանակը...»: Յիսուս ստէպ մահը քուն մը կը կոչէ: Ինչո՞ւ. Այն որ կը ննջէ կը զարթնուի, այսպէս պիտի ըլլայ նաև մեռելոց: Ասոր համար մեռեալները «ննջեցեալներ» կը կոչուին: 2. Յիսուսի գործերէն, Ան քանի մը ննջեցելոց յարուծեամբ (որոնց) և իր յատուկ յարուծեամբ ցուցուցած է թէ մեռեալները յարուցանելու կարողութիւնն ունի: Հոս կրնայ մէջ բերուիլ Սուրբ կուսին վերափոխումը և անոր նշանակութիւնը: 3. Նաև բնական շատ մը երևոյցներով Աստուած մեզի կը զիտցնէ թէ յարուծիւն մը կայ: Մեր առտուն զարթնումէն ամէն օր մեզի կը քարոզուի ապագայ յարուծիւնը, ինչպէս նաև ամէն տարի գարնան մէջ բնութեան զարթնումէն: Կրնայ յիշատակուիլ թրթուրը (որ մարդուն երկրի վրայ խորհրդանշանն է), հարսնակը (դիակը), և թիթեռնիկը (յարուցեալ մարմինը): Կը բացատրուի գաղտնիկան հապրի նշանակութիւնը (ինչ որ մեռեալ է կը կենդանանայ): Անոնց ուշադրութիւնը կը հրաւիրուի ցորենի հատին վրայ որ փտիլ կը թուի հողին մէջ և սակայն ծիւղ դուրս կ'արձկէ:

Դ. — Գաղափարին բացատրութիւնը: Տախտակին վրայ եղած խօսքերուն նկատմամբ հարցումներ կ'ըլլուին և անոնց կը պատասխանուի: 1. Ե՞րբ պիտի ըլլայ մեռելոց յարուծիւնը: Աշխարհիս վերջին օրը: 2. Ի՞նչ պիտի յարուցանէ Յիսուս, մարմինը թէ հողին: մարմինը: Ինչո՞ւ հողին չէ: 3. Ի՞նչ մարմին պիտի առնենք

մենք. ներկայինս թէ ուրիշ մը Հիմա-
կուան մարմիննիս. որովհետև իրաւացի
պիտի չըլլար որ ուրիշ մարմին մը վար-
ձատրուի կամ պատժուի: Մէջ բերուին
համարեող Յովքայ, Մակարայեցի եղբարց
խօսքերը և Ս. Բէրբէղուայի բանտին մէջ
ըսածները « Լաւ դիտեցէք զմեզ, որպէս
զի յարութեան օրը կարենաք ճանչնալ »:
4. Ինչ թնորթան պիտի ունենան յարու-
ցեալ մարմինները: Կատարեալ պիտի ըլ-
լան, առանց տարիքի, հիւանդութեանց
նշաններու, և նորէն իրենց կորսնցուցած
մասերը պիտի ունենան, Լուսաւորեալ պի-
տի ըլլան մարտիրոսաց վէրքերը և իրենց ի
փառաւորութիւն պիտի ծառայեն, ինչպէս
փրկչին սպինները: Արդարներուն յարուցեալ
մարմինները փառաւորեալ պիտի ըլլան
ինչպէս Քրիստոսի մարմինը (Լուսաւոր,
նուրբ, թեթեւ, անչարչարելի), մեղաւորաց
մարմինները տէ՛ս պիտի ըլլան (ոչ փա-
ռաւորեալ):

Է. — Գործնական կիրարկութիւն. —
Այս վարդապետութիւնը պէտք է մեզի
արիտարիտե՛ս ներշնչի մահուան միջոց, մաս-
նաւորապէս նաև մեր սիրելիաց մահուան
ատեն: Որով պէտք չէ իրենց յուզարկա-
ւորութեան վրայ չափազանցօրէն լալ և
ցաւիլ, ինչպէս հեթանոսները կ'ընէին:

Ընդհանրական դաստաստան

Հրահանգման ընթացքը հետեւեալն է:
Ա. — Իմանալուս: — Յիսուս յարու-
ցեալ մարդիկը դատաստանի պիտի կան-
չէ: Փրատարիտակին վրայ կը գրուի. Ընդ-
հանրական դատաստան:

Բ. — Գաղափարին ընդլայնումը: —
Յիսուսի Համարժեման պատմութիւնը կ'ըլ-
լուի և կը շնչուուի երկու հրեշտակաց խօս-
քերուն վրայ: Պատմութիւնը անմիջապէս
պէտք է կրկնել տալ. յետոյ կը պատ-
մուի (կամ կարդացուի) վերջին դատաս-
տանին վրայօք Յիսուսի այն մարգարէու-
թիւնները, յորում այս բաներս կան՝ « Ա-
նօթի էի և կերակրեցիք զիս »... և այլն.
պատմութիւնը կը կրկնուի, և տախտակին
վրայ կը նշանակուի:

Յիսուս փառաւորեալ
(Ընդհանրական) պիտի դատէ
դատաստան } յետին օրը

Գ. — Պատձասարանութիւնը: — Ո՛ր-
կից գիտենք մենք թէ ընդհանրական դա-
տաստան մը պիտի տեղի ունենայ: Քրիս-
տոս ըսաւ զայն: Ո՛րոնք են երկու հրեշ-
տակաց խօսքերը. Ո՛րոնք Յիսուսինները:

Գ. — Գաղափարին բացատրութիւնը: —
Տախտակին վրայ գրուած խօսքերուն նը-
կատմամբ հետեւեալ հարցմանքները կ'ը-
նենմ, որոնց նախ ես կը պատասխանեմ.

1. Ինչո՞ւ ընդհանրական դատաստան կ'ը-
սուի. վասն զի բոլոր մարդիկ կը դա-
տուին: Յետին դատաստան ալ կը կոչուի,
վասն զի աշխարհի վերջին օրը պիտի
ըլլայ: Ուրիշ դատաստան մ'ալ կայ: Այ՛ն՝
սառնձակական դատաստանը. ի՞նչ գիտենք
ասոր վրայ: 2. Ո՞վ պիտի կատարէ ընդ-
հանրական դատաստանը: Յիսուս, ըսնի
որ ինքն իսկ կ'ըսէ. « Հայրը ոչ զոք պիտի
դատէ, բայց... »: Ինչո՞ւ արդեօք Յիսուս
պիտի ընէ ընդհանրական դատաստանը և
ոչ հրեշտակ մը. ա. Որովհետև Յիսուս
մարդացաւ, մասնակից եղաւ մարդկային
վիճակին: (Վերաքննիչ կ'անուանուին ա-
րուեստագէտ անձինք): Գ. Որովհետև Յի-
սուս մեր փրկիչն է և զմեզ սուղ գնով
զնեց, այսինքն իր զոռն չարչարանքներով:
(Յարգի իրերը այնքան շուտ չեն նետեր,
թէ և իրենց մէջ պակասութիւն ալ ունե-
նան): Եւ սակայն Յիսուս ողորմած պի-
տի ըլլայ: Գ. Որպէս զի ամենուն առջև
հատուցուի իրեն այն պատիւը զոր Պիղա-
տոս և չար մարդիկ մերժեցին: Յիսուս
նորէն ազատ և ծածկեալ պիտի զայ ինչ-
պէս Բեթղէհէմի մտուրին մէջ: Ո՛չ, այլ
մեծ գորութեամբ և մեծ վայելչութեամբ,
հրեշտակներէ շրջապատուած, բազմած
զահին վրայ բոլոր ժողովուրդները իր առջև
պիտի հաւաքէ: 3. Յիսուս ի՞նչպէս պիտի
կատարէ դատաստանը: ա. Նախ և առաջ
ամէն բան պիտի յայտնէ (բազդատութիւն մը
համաշխարհիկ ցուցահանդիսի մը հետ):
Գ. Բոլոր մարդոցմէ պարմութեան գործեր
պիտի պահանջէ (թող յիշատակուի յաւի-

տենական դատաւորին խօսքերը «Անօթի էի...» յետոյ որդրմածասէր Սրբուհի Եղիսարեթիւնները. «Ես ընդհանրական դատաստանին կը պատրաստուիմ)»: Գ. Ան յատեանս բարինները չարերէն պիտի բաժնէ (նամանութիւն հովուին ոչխարներուն, ցորենին և որոմին, ակնարկութիւն Գողգոթայի, իրրև պատկերը ընդհարական դատաստանին, ուր ստուգիւ աջ կողմը կը գտնուի բարի աւագակը և ձախ կողմը դատաւարտեալը): 4. Ե՛րբ պիտի ըլլայ վերջին դատաստանը: Օրը և ժամը հրեշտակաց ալ անծանօթ են, (Բիսուաի խօսքերը). Յատաջագնաց նշաններ մեզի շատ լաւ ծանօթ են: Որո՞նք (տես Քրիստոնեակսեր):

Ե. — Գործնական կիրարկութիւնը: — Աստուծմէ անաչառ կերպով չզատուելու համար, կանոնաւորենք մենք զմեզ խղճի խնամոտ քննութեամբ, և անկեղծօրբեամբ յայտնելով մեր յանցանքները սուրբ խոստովանանքին մէջ. «Եթէ զմեզ քննէինք, պիտի չդատաւարտուէինք (Պօղ. Ա. կորնթ. ԺԱ. 31):

ՄՍ.ԿԵԳՈՆՆԻԱՆ ՀԵՏԱՊՆԳՈՒԱԾ

ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ

Մակեդոնիան միշտ կոռոյ խնձորն եղած է պալքանեան Պետութեանց միջև: Այն ընդարձակ շրջապատի մէջ, որուն սահմանները կատարելապէս որոշուած չեն ոչ Պուլկարիոյ կողմէն, ոչ Ալլպանիոյ կողմէն և ոչ ալ Յունաստանի կողմէն, երբ թագաւորութիւնները միշտ իրարու դէմ կուած են... Նոյն իսկ այն ատեն երբ զեռ խաղաղութիւն էր և երկիրը կը պատկանէր Տրակաստանի: Մոֆիոյ, Պիլկրատի և Աթէնքի կառավարութիւնը նուազ կամ աւելի բացայայտ կերպով կը քաջալերէին հոն ապստամբութիւններ և խռովութիւններ, մերթ ընդ մերթ նոյն իսկ

զաշնակցելով տաճկին հետ փոխադարձաբար իրարու դէմ կուռելու համար: Ինչպէս աշխարհագրութիւնն այնպէս ալ ցեղագրութիւնը շատ կնճռոտեալ է այս գաւառիս մէջ, որ այնքան ժամանակ եղած է հոռովմէական լեզուններու անցքի երկիր մը Բիւզանդիոնի ճամբուն վրայ, և յետոյ նաև անցքի երկիր մը վաճառականներու, որոնք կտրելով Ալքրիական ծովն ու պալքանեան թերակղզին, կ'երթային դէպ ի հեռաւոր Արևելք հետեւելով արդէն իսկ Աղեքսանդրի կորած ուղւոյն: Մի և նոյն ժամանակ, և զեռ աւելի վերջն ալ, երբ սլաւական ասպատակութիւնները Գանուր գետն անցան և սփռուեցան թերակղզւոյն մէջ, Մակեդոնիան եղաւ, փոխն ի փոխ, սերպ, պուլկար, յոյն, և մինչև կէտ մը, նաև ռումէն, որովհետև եթէ երբէք չափազանց բազմաթիւ ալ չեղան այն Գուլգոթայի վալազները (կաղ վալազներ) – որոնց պատճառաւ տաճկական աշխարհակալութեան վերջին տարիներու մէջ Ռուսիան ալ հետաքրքրուեցաւ Մակեդոնիոյ անցքերով, – եղաւ սակայն ժամանակի շրջան մը յորում պուլկար – ռումէն կայսրութիւն մը, որ թերակղզւոյն մեծ մասին վրայ կ'իշխէր, կը կառավարուէր ռուսական արքունի ցեղէ մը, Յեւներու հարստութենէն:

Ժողովուրդներու աղցանը

Աշխարհիս մի քանի գաւառներու մէջ, որոնք, կովկասի նման, յաջորդաբար անցքերու ծառայեցին, ցեղային խումբեր մտացած են զեռ իրրև ղերտեր: Մակայն պալքանեան թերակղզւոյն մէջ, և մանաւանդ Մակեդոնիոյ մէջ, գաղթական ցեղերը իրենց ճամբորդութեան վերջը գտնուեցան և հոն հաստատուեցան: Կոլք, թէ՛ հարաւայինը և թէ՛ արևմտեանը, զիրենք կասեցուց: Ետոյ համոզները առաջուց գոյութիւն ունեցող ժողովուրդներու ձեռքէն յափշտակել ուզեցին երկիրներու տէրութիւնը: Սերպիւր և պուլկարներ բարդուեցան յունաց վրայ, և երկար տարիներ